

ձեզ խաղաղական կենօք եւ պարագայց ամօք մինչ ի խորին ծերութիւնն . ամէն :

Եւ ընդ օրհնութեանս ծանիք սիրելիք , զի դուք ի սկզբանէ սեպհական թէմ եւ վիճակ էք սուրբ Նախավկայի վանիցն ի նախնաց հարցն սրբոց սահմանեալ եւ հաստատեալ մինչեւ ի մեզ : Եւ սուրբ Նախավկայի առաջնորդ եղեալն ինքնակամ է շրջին ընդ ամենայն տեղիս : || է ² ոչ եւ կարդ մեզ քակել զցանդ հարցն սրբոց կամ զնոցին ⁴ սահմանեալ վիճակն առնուլ եւ տալ ||| ³ վասն մարդահաճութեան կամ ակնառութեան , որ է ընդդէմ օրինաց եւ կանոնաց նախնեաց որպէս դուք ² կարծէք Զուղայու եւ Աստապատու կողմանէն՝ ոչ է այդպէս . այլ թոյլ տուաք ժամանակ ինչ ըստ անյարմար գնացից եւ անմիաբան լինելոյ նոցա , զի թերեւս դայցեն յուղղութիւն : Եւ ինչ սեպհական առաջնորդ ի սուրբ Նախավկայն հաստատի , նոցա հասք եւ իրաւունքն ի նա պարտի հասանիլ : Եւ ի՛նչ օրինաց եւ կանոնաց հարցաքննութիւն լինի , թէ հասի թէ չհասի , թէ կենդանեաց եւ թէ մեռելոց , զամենայնն ի նմանէ պարտիք տեղեկանալ . զի հաստատուն արձան ⁴ սուրբ Նախավկայն է եւ սեպհական առաջնորդ ձեր եւ տեղեացն նստողն է ||||| ⁵

² Բառ մը անընթեռնլի :

³ Երկու բառ անընթեռնլի :

⁴ Դժուարընթեռնլի :

⁵ Տող մը անընթեռնլի :